Գլխավոր տեղեկություն	
Համար	N 546-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (18.11.2019-17.02.2023)
Կարգավիճակ	Չի գործում
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2018.05.16/40(1398) Հոդ.658
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	03.05.2018
Ստորագրող մարմին	Վարչապետի պաշտոնակատար
Ստորագրման ամսաթիվ	08.05.2018
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	26.05.2018
Ուժը կորցնելու ամսաթիվ	21.02.2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մայիսի 2018 թվականի N 546-Ն

ՎԵՐԱԴԱՍ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ, ՎԵՐԱԴԱՍ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏ-ԲԱԺԻՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N 865-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին և 4-րդ մասի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել վերադաս մաքսային մարմնի, վերադաս մաքսային մարմնի մաքսատուն-վարչությունների ու մաքսային կետ-բաժինների տեղակայման վայրերը՝ համաձայն հավելվածի։

2. Սահմանել, որ՝

1) վերադաս մաքսային մարմնի Արևմտյան մաքսատուն-վարչության գործունեության տարածք են հանդիսանում «Զվարթնոց» և «Երեբունի» օդանավակայանների տարածքները.

2) վերադաս մաքսային մարմնի Արարատյան մաքսատուն-վարչության գործունեության տարածք են հանդիսանում Երևանը, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի վարչական տարածքները.

3) վերադաս մաքսային մարմնի Հարավային մաքսատուն-վարչության գործունեության տարածք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սյունիքի և Վայոց ձորի մարզերի վարչական տարածքները.

4) վերադաս մաքսային մարմնի Արևելյան մաքսատուն-վարչության գործունեության տարածք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի վարչական տարածքները.

5) վերադաս մաքսային մարմնի Հյուսիսային մաքսատուն-վարչության գործունեության

տարածք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի վարչական տարածքը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Մաքսային մարմինների տեղակայման վայրերը և մաքսատների գործունեության տարածքները հաստատելու մասին» N 865-Ն որոշումը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի պաշտոնակատար **Կ. Կարապետյան**

2018 թ. մայիսի 8
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
մայիսի 3-ի N 546-Ն որոշման

ՎԵՐԱԴԱՍ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ, ՎԵՐԱԴԱՍ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏ-ԲԱԺԻՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա պետական եկամուտների կոմիտե՝ քաղ. Երևան, Մովսես Խորենացի 3,7:

2. Վերադաս մաքսային մարմնի Արևմտյան մաքսատուն-վարչություն՝ քաղ. Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, քաղ. Երևան, Տիգրան Մեծի 1-ին փակուղի, 1 և «Էրեբունի» օդանավակայան, քաղ. Երևան, Արշակունյաց պող. 135, ինչպես նաև իր գործունեության տարածքում գործող ժամանակավոր պահպանման, մաքսային և ազատ պահեստների ու ազատ տնտեսական գոտիների գտնվելու վայրերը:

3. Վերադաս մաքսային մարմնի Արարատյան մաքսատուն-վարչություն՝ քաղ. Երևան, Ծովակալ Իսակովի 10, 10ա, Արշակունյաց 127/21, ինչպես նաև իր գործունեության տարածքում գործող ժամանակավոր պահպանման, մաքսային և ազատ պահեստների ու ազատ տնտեսական գոտիների գտնվելու վայրերը:

4. Վերադաս մաքսային մարմնի Հարավային մաքսատուն-վարչություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, Շաքիի համայնք, ինչպես նաև իր գործունեության տարածքում գործող ժամանակավոր պահպանման, մաքսային և ազատ պահեստների ու ազատ տնտեսական գոտիների գտնվելու վայրերը՝

1) Մեղրիի մաքսային կետ-բաժին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, Կարճևանի համայնք:

5. Վերադաս մաքսային մարմնի Արևելյան մաքսատուն-վարչություն՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, քաղ. Վանաձոր, Մոսկովյան 44, ինչպես նաև իր գործունեության տարածքում գործող ժամանակավոր պահպանման, մաքսային և ազատ պահեստների ու ազատ տնտեսական գոտիների գտնվելու վայրերը՝

1) Բագրատաշենի մաքսային կետ-բաժին՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, Բագրատաշենի համայնք.

2) Այրում-Ջիլիզայի մաքսային կետ-բաժին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, «Այրում» ե/գ կայարան, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Ալավերդու համայնք, Մադան թաղամաս.

3) Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետ-բաժին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Ձորամուտի համայնք, գյուղ Գոգավան, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Պրիվոլնոյեի համայնք:

6. Վերադաս մաքսային մարմնի Հյուսիսային մաքսատուն-վարչություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Մովսես Խորենացու 1, 2 և Թբիլիսյան խճուղի 2/14, ինչպես նաև իր գործունեության տարածքում գործող ժամանակավոր պահպանման, մաքսային և ազատ պահեստների ու ազատ տնտեսական գոտիների գտնվելու վայրերը՝

1) Բավրայի մաքսային կետ-բաժին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Բավրայի համայնք.

2) «Շիրակ» օդանավակայանի մաքսային կետ-բաժին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, «Շիրակ» օդանավակայան:

(6-րդ կետը լրաց. 14.11.19 N 1567-Ն)
(հավելվածը լրաց. 14.11.19 N 1567-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Վ. Ստեփանյան**